

336.255

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

ԽՍՀՄ ԳԻՆԱՆՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ

**Հ Ր Ա Հ Ա Ն Գ**

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ  
ՑԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍ  
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ  
ԿԻՐԱՌՈՄԱՆ ՄԱՍԻՆ

20 MAR 2018

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԽՍՀՄ ԳԻՒԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

1937 թ. սեպտեմբերի 25-ին

№ 487

§ 1

Վերացնել՝ կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիական տնտեսությունների գյուղատնտեսական հարկի կիրառման կարգի մասին 1935 թվի Հունիսի 1-ի № 442 հրահանդը և կիրարկման մեջ դնել 1937 թվի սեպտեմբերի 25-ի № 479 հրահանդը:

§ 2

№ 479 հրահանդը հրապարակելու որից, գյուղատնտեսական հարկի խնդիրների մասին, մինչև 1937 թ. սեպտեմբերի 25-ը յեղած կարգադրությունները՝ համարել ուժը կորցրած և հակասող այս հրահանդին:

ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսար՝  
Վ. ԶՈՒԲԱՐ

Խսկականի հետ ճիշտ ե՝

Մկրտիչ Գյուլամիրյան

Թարգմանեց՝

Սարգիս Հարությունյան



11-3/7/79

Պրոլետարենք բոլոր յերկների, միացե՛ք

## ԽՍՀՄ ԳԻՒԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Հ Ր Ա Մ Ա Ն № 479\*)

1937 թ. սեպտեմբերի 25-ին

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏԸՆ-  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ  
ԿԻՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հատված 1-ին

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՈՐԵՆՔԻ 1-ԻՆ ՀՈԴ. — Գյուղատնտեսական հարկով հարկ-  
վում են.

ա) Վերացված է.

բ) Կրամանելու տնտեսությունները.

շ) Մենատնտես գյուղացիական տնտեսությունները:

ՈՐԵՆՔԻ 2-ՐԴ ՀՈԴ. — Վերացված է:

ՈՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈԴ. — Գյուղատնտեսական հարկի հարկա-  
յին տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչեւ ընթացիկ տար-  
վա դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՈՐԵՆՔԻ 4-28-ՐԴ ՀՈԴ. — ՀՈԴ. — Վերացված են:

\*) Շեղատառերով տղագրված և 1934 թվի գյուղատնտեսական հարկի որենքը այն փոփոխություններով, վորոնք մտցված են ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմիորնի 1935 թվի մայիսի 31-ի «1935 թ. գյուղատնտեսական հարկի մասին», ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմիորնի 1936 թվի հուլիսի 20-ի № 68/1313 «Գյուղատնտեսական հարկի որենքի գործողության յերկարացման մասին» և ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմիորնի 1937 թ. ողոսաօի 7-ի № 104/1318 «Գյուղատնտեսական հարկի որենքը փոփոխելու մասին» գորո-  
շումներով:

ԽՍՀՄ-ի Ֆինանսների նրանքը առաջարկում են սովորական տառերով:

Հատված 2-րդ:

ԿՈՒՑՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶՀԱՆՐԱՅՆԱՅՎԱԾ  
ՄՈ.ՍԻ ՀԱՐԿՈՒՄԸ

## Ա. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

ՈՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴ.— Զհանրայնացված յեկամուտներ չունեցող կոլտնտեսականները լրիվ ազատվում են հարկից :

Հրահանգի § 1.— Գյուղատնտեսական հարկով չեն հարկվում այն կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնք չունեն տնամերձ հողամասեր և վոչ վարձու վոչ-գյուղատնտեսական յեկամուտները : Գյուղատնտեսական հարկով նույնուրություն չեն հարկվում այն տնտեսությունները, վորոնք ունեն միմիայն խոռոչաբքներ և դրանք որտապործում են բացառապես իրենց տնտեսների համար :

Հրահանգի § 2.— Խառն արհեստագործական — գյուղատնտեսական արտելների (պրոմկոլլուսովների) անդամները, իրենց ոլորժկոլիսողի արհեստագործական ձեռնարկներում կատարած աշխատանքի յեկամտի համար յենթարկվում են հարկման յեկամտային հարկով և կուլտուրքով, բանվորների և ծառայողների համար սահմանված դրույքներով : Այս կարգը կիրառվում է 1937 թ. հուլիսի 1-ից : Իրենց կոլտնտեսության վոչ-գյուղատնտեսական ձեռնարկություններում կոլտնտեսության անդամների կատարած աշխատանքի համար ստացված վարձատրությունն առանձին յեկամտային հարկի և կուլտուրքի հարկման յենթարկաչ:

Հրահանգի § 3.— Զկնորսական կոլտնտեսությունների անդամները գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում, յեթե նրանք ողարապում են միայն ձկնորսական արհեստով :

Զկնորսական կոլտնտեսությունների այն անդամները, վորոնք բացի ձկնորսական արհեստի յեկամուտներից ունեն նաև յեկամուտներ գյուղատնտեսությունից և այլ արհեստներից, յենթարկվում են գյուղհարկի այն դրույքներով, վորոնք սահմանված են տվյալ վայրում կոլտնտեսականների համար :

ՈՐԵՆՔԻ 30-ՐԴ ՀՈԴ.— Այն կոլտնտեսականների տնտեսություններից, վարում ունեն չհանրայնացված գյուղական տնտեսության յեկամուտներ, գյուղհարկը զանձվում է 10-ից մինչև 50 ռ. դրույքներով յուրաքանչյուր տնտեսությունից :

Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներն այդ դրույքների սահմաններում վորոշում են հարկի միջին դրույքները ինքնավար հանրապետությունների, յերկրների և մարզերի, իսկ այնաև, վորտեղ դրանք չկան, — առանձին շրջանների համար :

Ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիսարները սահմանում են հարկի միջին դրույքներն առանձին շրջանների համար :

Շրջանային գործադիր կոմիսարները սահմանում են տուաճին գյուղերի համար հարկի դրույքները, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տուաճին կոլտնտեսությունների համար :

Կոլտնտեսության սահմաններում, կոլտնտեսականների առանձին տնտեսությունների համար տարբեր դրույքների սահմանումը չի բույլատրվում :

ՈՐԵՆՔԻ 31-ՐԴ ՀՈԴ.— Յերե կոլտնտեսականների տնտեսությունները չհանրայնացված գյուղատնտեսության հետ միաժամանակ ունեն մշտական յեկամուտներ վոչ-կոռպերացված տրնայնա-արհեստավորական գրադմունքներից, այդ դեպքում նրանց դրույքը (30 հոդ.) բարձրացվում է 40—80 տոկոսվ :

Դաշնակից և ինքնավար հանրապետությունների ժողկոմինորիները, յերկրային և մարզային գործկոմիները սահմանում են վերջնական բարձրացման չափերը յուրաքանչյուր շրջանի համար, ըստ վորում տարբեր տեսակի արհեստների համար կարող են սահմանվել դրույքի բարձրացման տարբեր տոկոսներ :

Դաշնակից և ինքնավար հանրապետությունների ժողկոմինորիներին, յերկրային և մարզային գործկոմիներին իրավունք է վերապահվում չկիրառել վերեկում նշված հարկի դրույքների բարձրացումն այն կոլտնտեսականների տնտեսությունների նկատմամբ, վորոնք ունեն մշտական յեկամուտներ վոչ-կոռպերացված տրնայնա-արհեստավորական արհեստներից առանձին շրջաններում և առանձին արհեստների նկատմամբ :

Այն դեպքերում, յերբ տնայնա-արհեստավորական գրադմունքը կրում է պատահական բնույթը և այդ գրադմունքների յեկամուտներն անհշան են, այդպիսի կոլտնտեսականների տնտեսությունների հարկի դրույքի բարձրացումը չի կատարվում :

Հրահանգի § 4.— Այն կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնք ունեն յեկամուտներ վոչ-կոռպերացված աընայնա-արհեստավորական զբաղմունքներից կամ ուրիշ վոչ-դյուլատնտեսական յեկամուտներ վոչ վարձու աշխատանքից, սակայն չունեն տնամերձ հողամասեր, հարկը վճարում են սահմանված դրույքներով, սակայն նրանց նկատմամբ հավելում չի կիրառվում:

Հրահանգի § 5.— Այն տնտեսությունների ցուցակը, վորոնց համար պետք է կատարվի հարկի բարձրացում որենքի 31-րդ հոդվածի կարգով, հաստատվում և ըջուրծկոմի կողմից ընթացին ֆինանսական բաժնի հարուցմամբ:

Հրահանգի § 6.— ԽՍՀՄ կԳԿ-ի և ԺԿԽ-ի 1936 թ. ապրիլի 7-ի № 52/653 վորոշման հիման վրա արհեստագործական կոռպերատիվ արտեների անդամների տնտեսությունները դյուդյուկան վայրերում յենթարկվում են դյուզհարկի վճարման ըրհանրայնացված յեկամտի աղբյուրներ ունեցող կոլտնտեսականների տնտեսությունների համար սահմանված հավասար հիմունքներով, այն պայմանով, յեթե՝

ա) արհեստագործական կոռպերատիվ արտելի տվյալ անդամնի այնպիսի դյուզական տնտեսություն, վորը յենթակայի հանրայնացման ըստ կոլտնտեսության կանոնադրության և

բ) յեթե տվյալ տնտեսության աշխատունակ բոլոր անդամները, բացի տնային տնտեսուհուց և ուսանողներից, արհեստագործական արտելի կամ կոլտնտեսության անդամ են, կամ թե աշխատում են վարձով:

Հրահանգի § 7.— Հաշմանդամների կոռպերացիայի միության մեջ մանող արտեների անդամների տնտեսությունները, յեթե նրանք լիովին բավարարում են § 6-ով նախատեալած պայմաններին, յենթարկվում են դյուզհարկի վճարման կոլտնտեսականների հետ հավասար հիմունքներով: Իսկ դրանցից նրանք, վորոնք ստանում են կենսաթոշակ վորպես պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ, ամբողջովին աղատվում են հարկի վճարումից:

Հրահանգի § 8.— Ապակու արտադրության և քարածիսի հանքահանման տնայնա-արհեստագործական արտեների անդամների տնտեսություններն ամբողջովին աղատվում են դյուզհարկի

վճարումից, յեթե նրանք համապատասխանում են հրահանգի § 6-ի պահանջներին:

Հրահանգի § 9.— Այն կոռպերացված տնայնադորձների տնտեսությունները, վորոնք դյուզհարկ վճարում են կոլտնտեսականների դրույքներով, նրանց հարկի դրույքը բարձրացվում է 40—80 %-ով (համաձայն որենքի 31-րդ հոդվածի), յեթե նրանք արտելից գուրս արհեստից ունեն յեկամուտներ:

ՈՐԵՆՔԻ 31-Ա ՀՈԴ.— Այն աշխատավոր մենատնտեսների տնտեսությունները, վորոնք կոլտնտեսագրուն են մտել մինչև տվյալ գյուղի գյուղատնտեսական հարկի վնարման առաջին ժամկետը, հարկվում են վորպես կոլտնտեսականներ:

Այն տնտեսությունները, վորոնք կոլտնտեսությունից դուրս են յեկել ընթացիկ տարում, գյուղատնտեսական հարկ վնարում են վորպես մենատնտեսներ, յեկամուտների այն աղբյուրների համար, վոր նրանք ունեն կոլտնտեսությունից դուրս գալու պահին:

Հրահանգի § 10.— Կոլտնտեսություններից դուրս յեկած աընային տեսությունների վոչ-դյուզատնտեսական յեկամուտների, ինչպես և շուկայում վաճառված գյուղատնտեսական մթերքների յեկամուտների վորոշելը կատարվում է այն ընդհանուր հիմունքներով, վոր սահմանված են մենատնտես գյուղացիական տնտեսությունների համար:

Հրահանգի § 11.— Այն դեղբերում, յերբ կոլտնտեսական տնտեսության կազմից ընտանիքի առանձին անդամներ կոլտնտեսության մեջ չեն կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից, նրանք հարկվում են ըստ իրենց ինքնուրույն յեկամտի աղբյուրներով յեկամտային հարկով այդ որենքի համաձայն:

ՈՐԵՆՔԻ 32-ՐԴ ՀՈԴ.— Այն տնտեսությունները, վորոնք կազմում ունեն 2 հոգուց փոք ավելի աշխատունակ անդամներ, նրանց ընտանիքի անաշխատունակ անդամներին հաշվարկված հարկից տրվում են հետևյալ գեղչերը.

3 անաշխատունակի դեպքում հարկի չափն իշեցվում է 20 %-ով, 4 և ավելի անաշխատունակների դեպքում՝ 30 %-ով:

Հրահանգի § 12.— Այն կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնք որենքի 31 հոդվածի կիրառումով հարկվում են դյուզհարկով, հավելումով, անաշխատունակների համար դեղչը

տուվում և հարկի ընդհանուր գումարից, ներառյալ և հավելում:

Կոռպերացված տնայնազործների տնտեսությունները, վորոնք գյուղհարկով հարկված են կոլտնտեսականների դրույքներով, ընտանիքի անաշխատունակ անդամների գեղջերը տրվում էն կոլտնտեսականների տնտեսությունների համար սահմանված չափերով:

Հրահանգի § 13.—Որենքի 32 հոդվածով տնտեսությանը տրված զեղչի իրավունքը վորոշելիս՝ անաշխատունակներ համարվում են՝

ա) վաթսուն և ավելի տարիք ունեցող կոլտնտեսականները, 55 և ավելի տարիք ունեցող կոլտնտեսուհիները, մինչև 16 տարեկան յերեխանները.

բ) այն հաշմանդամները, վորոնք չեն կարողանում մասնակցել դաշտային և այլ աշխատանքներին.

գ) պատերազմի և աշխատանքի այն հաշմանդամները, վորոնք սոցիալական ապահովության կամ սոցիալական ապահովագրության մարմինների կողմից դասվել են հաշմանդամության 1-ին և 2-րդ խմբակներին:

Այն տնտեսությունները, վորոնք ունեն 3 և ավելի աշխատունակ անդամներ, որենքի 32 հոդվածով նախատեսված զեղչը չեն ստանում, անկախ անաշխատունակների թվից:

Աշխատունակների թվը հաշվելիս, այն անձինք, վորոնք դանվում են կարմիր բանակում կամ կարմիր նախատերմում, և ուսումնական հիմնարկների ուսանողները, վորտեղ ուսուցման ժամկետը մի տարուց բարձր և, հաշվի չեն առնվում:

ՈՐԵՆՔԻ 33-ՐԴ ՀՈԴ.— Աշխատավարձը հարկվում է վոչ թյուղատնտեսական հարկով, այլ յեկամտահարկով ըստ աշխատանքի տեղի:

Գյուղատնտեսական հարկի չեն յենք արկվում կոլտնտեսությունների անդամների այն բանվոր-ծառայողների տնտեսությունները, վորոնց հիմնական աշխատավորը հարկվող որյեկտների հաշվառումն անցկացնելու մոմենտին գտնվում է մշտական վարձու աշխատանքում մեկ տարուց վոչ պահաս, իսկ տվյալ տնտեսության մնացած աշխատունակ անդամները, բացի ուսանողներից և տնային տնտեսություն վարող անձանցից, նույնպես վարձու աշխատանիք են կատարում:

Հրահանգի § 14.— Բանվորների և ծառայողների այն տնտեսությունները, վորոնք լիովին համապատասխանում են որենքի 33 հոդվածի պայմաններին, աղասիվում են գյուղհարկի վճարումից, անկախ այդ տնտեսությունների անդամների կողմանում վաստակած աշխատավարձը բանակից:

Հրահանգի § 15.— Բանվորների և ծառայողների տնտեսություններին հավասարեցվում են այն կարմիր բանակայինների և հրամանատարների տնտեսությունները, վորոնք գտնվում են ծառայության մեջ կարմիր բանակում և նախատերմում, անկախ բանակում և նախատերմում ունեցած նրանց ծառայության տեղականությունից, յեթե նրանք համարակալաւանում են որենքի 33-րդ հոդվածի մնացած պայմաններին:

Յեթե այդպիսի տնտեսության անդամները կանչված են կարմիր բանակ հարկի վճարման ծանուցագրերը հանձնելուց հետո, դիմում են նրանց հարկի այն մասերը, վորոնց վճարման ժամկետները չեն լրացել:

Հրահանգի § 16.— Կոլտնտեսականների տնտեսությունները որենքի 33-րդ հոդվածի համաձայն գյուղհարկի վճարումից աղատելու համար յենթաշրջանային հարկային տեսուչը կարող է նրանցից տեղեկանք պահանջել աշխատանքի տեղից:

## Բ. ԱՐՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈԼՏՆՏԵՍԱՎԱՆՆԵՐԻՆ

ՈՐԵՆՔԻ 34-ՐԴ ՀՈԴ.— Կոլտնտեսականների չհանդարանացված յեկամուտները հարկելիս հաշվի չեն առնվում կոլտնտեսությունից սուացած յեկամուտները (աշխարերի վարձատրումը):

ՈՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴ.— Անանապահության, թոշնաբուծության և մեղվաբուծության գարզացմանը ոժանդակելու նպատակով հարկումից աղատվում են կոլտնտեսականների բոլոր անսուները, թոշուները, նագարները և մեղուները:

ՈՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴ.— Կոլտնտեսային առելուուրը գարզացնելու նպատակով կոլտնտեսականների նկատմամբ չի կիրավում մենատնտեսների համար սահմանված՝ շուկայում վաճառվող գյուղատնտեսական մթերքների յեկամուտների հատուկ հարկումը (հոդ. 61):

ՈՐԵՆՔԻ 36-Ա ՀՈԴ.— Այն կոլտնտեսականները, վորոնք անշխատունակ են զառամյալ հասակ ունենալու պատճառով (վար-

սուն տարեկան և ավելի) և ընտանիքում չունեն աշխատունակ անդամներ, հարկից լիովին ազատվում են:

Հրահանգի § 17.— Շրջֆինքաժինները ղառամյալ կոլտնտեսականներին գյուղատնտեսական հարկից ազատում են շրջանային գործադրի կոմիտեների հիման վրա:

Գյուղհարկից ազատելու համար ղառամյալների տնտեսություններից հատուկ դիմումներ պահանջեն արդելվում են:

Հրահանգի § 18.— Գյուղհարկի վճարումից ազատվում են այն կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնք անաշխատունակ են ղառամության պատճառով և չունեն տվյալ տնտեսության մեջ զբաղված առկա ընտանիքի աշխատունակ ուրիշ անդամներ:

Գյուղատնտեսական հարկի վճարումից ազատվում են նաև այն ղառամյալ կոլտնտեսական տղամարդկանց և կանանց տնտեսությունները, վորոնց վորդին գտնվում է Կարմիր բանակի կամ Կարմիր նախատորմի խոհական ղենգորական ծառայության մեջ, իսկ տանը մնացել են նրա կինը, մինչև 7 տարեկան յերեխաններով:

ՈՐԵՆՔԻ 37-ՐԴԻ ՀՈԴԻ.— Շրջանային գործադրի կոմիտեները շրջֆինքաժինների միջնորդությամբ կարող են կոլտնտեսականների առանձին տնտեսություններին (որինակ՝ տարերային աղետներից տուժածներին և այլն) լիովին կամ մասնակի ազատել գյուղհարկից:

Հրահանգի § 19.— Տարերային աղետի և այլ պատճառների համար հարկից զեղչ տալու մասին շրջանային գործադրի կոմիտեի վորոշումը հիմք չի ծառայում պետական մյուս պարտավորություններից արտոնություններ տալու համար:

Տարերային աղետի առթիվ արտոնություններ տալու և զեղչի չափը վորոշելու հիմք կարող են ծառայել շրջանային ապահովագրական հանձնաժողովների արձանագրությունները:

ՈՐԵՆՔԻ 38-ՐԴԻ ՀՈԴԻ.— Վերաբնակվող կոլտնտեսությունների անդամների տնտեսությունները հարկից ազատվում են նույնական ծամանակող, վորքան ժամանակող ազատվում են կոլտնտեսությունները:

ՈՐԵՆՔԻ 39-ՐԴԻ ՀՈԴԻ.— Հարկից լրիվ ազատվում են կոլտնտեսականների այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում են՝

ա) Խորհրդային Միության հերոսները, ԽՍՀ Միության շքա-

նշաններով կամ պատվավոր հեղափոխական գեներով պարգեղաւարքած անձինք և աշխատանիքի հերոսները:

բ) Պատերազմի և աշխատանիքի հաշմանդամները, վորոնք դասված են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբակները:

ՈՐԵՆՔԻ 40-ՐԴԻ ՀՈԴԻ.— Այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ մտնում են սահմանված ուսման և հավաքի համար կանչված պահեստի զինվորական ծառայողները և զինապարտները, հարկի այն մասը, վորի մուծելու ժամկետը զուգավիպում ե ուսման կամ հավաքի ժամկետին, հետաձգվում ե նըրանց վերաբնակվուց հետո մի ամիս ժամանակով:

ՈՐԵՆՔԻ 41-ՐԴԻ ՀՈԴԻ.— Վերացված ե:

ՈՐԵՆՔԻ 42-ՐԴԻ ՀՈԴԻ.— Հարկից ամբողջովին ազատվում են գյուղական ակտիվիտեների այն ընտանիքները, վորոնք տուժել են կուլակային վրեժինդրությունից գյուղի սոցիալիստական վերակառցման համար մղվող պայքարում և հանրային սեփականությունը պահպանելու համար:

ՈՐԵՆՔԻ 43-ՐԴԻ ՀՈԴԻ.— Հարկից ամբողջովին ազատվում են անտառային այն աշխատականիցների ընտանիքները, վորոնք սպանվել են պետական գույքի պահպանման համար իրենց ծառայության պարտականությունները կատարելու ժամանակ, կամ իրենց պաշտոնական պարտականությունը կատարելու կապակցությամբ:

ՈՐԵՆՔԻ 44-ՐԴԻ ՀՈԴԻ.— Բացի վերը բաված արտօնություններից, կոլտնտեսականներին արտօնություններ են տրվում նաև 70, 71, 86 և 88 հոդվածների կարգով:

## Գ. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ՈՐԵՆՔԻ 45-ՐԴԻ ՀՈԴԻ.— Հարկը վճարվում է մի ժամկետներով:

Ըստ դաշնակից հանրապետությունների սահմանվում են հարկի վճարման հետևյալ վերջական ժամկետները.

Պետք է մուտք լինի հանրապետության մեջ հաշվարկված ամբողջ հարկի գումարի նկատմամբ տոկոսներով:

Դաշնակից հանրապետություններ	1/IX	1/X	15/XI	15/XII
ՌԽՖՍՀ . . . . .	20	20	35	25
ՈՒԳԽՄՀ . . . . .	20	30	40	10
ԲԽՍՀ . . . . .	15	15	45	25
Աղբյեջան ԽՍՀ . . . . .	—	25	45	30
Վրացական ԽՍՀ . . . . .	—	25	45	30
Հայկական ԽՍՀ . . . . .	—	25	45	30
Թյուրքի ԽՍՀ . . . . .	—	40	40	20
Ուգր. ԽՍՀ . . . . .	—	30	50	20
Տաճիկ. ԽՍՀ . . . . .	—	30	50	20
Ղազախական ԽՍՀ . . . . .	—	30	50	20
Կիրգիզ. ԽՍՀ . . . . .	—	30	50	20

Յելենով այս ժամկետներից՝ դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները սահմանում են վճարման ժամկետներ—ինքնավար հանրապետությունների, յերկրների, մարզերի համար, իսկ այնուղիւ, փորտեղ այդ բաժանումները չկան՝ ըստ շրջանների:

Ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գրածադիր կոմիտեները սահմանում են վճարման ժամկետներն ըստ այն շրջանների, փորմի մտնում են ինքնավար հանրապետության, յերկրի կամ մարզի կազմի մեջ:

Հրահանգի § 20.— 1937 թվի համար ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1937 թ. հունիսի 29-ի № 101/1022 վորոշմամբ ՌԽՖՍՀ, ՈՒԿԽՄԽ և ԲԽՍՀ համար գյուղատնտեսական հարկի վճարման վերջնական ժամկետների սահմանված են՝ հոկտեմբերի 1-ին 20 %, նոյեմբերի 1-ին 20 %, գեկտեմբերի 1-ին 40 % և դեկտեմբերի 20-ին հարկի դումարի 20 %:

Հրահանգի § 21.— Հարկի վճարման համար որենքով սահմանված ժամկետների քանակի կրճատում, ինչպես և գերթական վճարումների չափերի փոփոխություն ըստ ժամկետների չփույլատրվում:

ՈՐԵՆՔԻ 46-ՐԴ ՀՈԴ.— Յուրաքանչյուր շրջանի համար սահմանված ժամկետները կրապարակում են բոլորին ի գիտություն, հայտարարվում են գյուղական ժողովներում, մտցվում են վճարման ժամկետների մեջ և ամբողջ դրույժային տարվա ընթացքում չեն կարող փոփոխվել:

Հատված 3-րդ

## ԷՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՈՐԵՆՔԻ 47-ՐԴ ՀՈԴ.— Հարկը հաշվարկվում է յուրաքանչյուր մենատնես աշխատավոր տնտեսությունից հետևյալ աղյուրմերից ստացվող յեկամտի համար.

ա) դաշտավարությունից.

բ) մարգագործությունից.

շ) բոլոր տեսակի անասուններից.

դ) գյուղատնտեսության հետևյալ հատուկ նյութերից. բանարարութությունից, բռստանարութությունից, այգեգործությունից, խաղողագործությունից և ծխախոտագործությունից.

ե) տնայնագործական - արհեստավորական արհեստներից և այլ վոչ-գյուղատնտեսական վաստակներից, բացի աշխատավարձուց, փորը հարկվում է յեկամտահարկով աշխատանքի տեղում: ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.— Վորսորդության յեկամուտները

գյուղարկով հարկվում են միայն այն շրջաններում, վորտեղ այդ գրադամունքը կամ արհեստն ունի արդյունաբերական գարգացում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.— Զկնորսության յեկամուտները գյուղարկով հարկվում են միայն այն տնտեսություններում, վորոնք փորը կրնորակուացիայով չեն հանձնում պետական ձկնորսական արդյունաբերական ձեռնարկություններին կամ կոռպերատիվ կազմակերպություններին:

Հրահանգի § 22.— Գյուղհարկով հարկվում են բոլոր մենատնես այն տնտեսությունները, վորոնք ունեն գյուղատնտեսական յեկամուտներ, ինչպես հողային տարածությունների ողտագործումից, նույնպես և բանող և մթերատու անասունների ողտագործումից. այն անձանց տնտեսությունները, վորոնք առպում են գյուղական վայրերում և չունեն գյուղատնտեսական յեկամուտներ, չըջֆինրաժինները հարկում են յեկամտահարկի որենքով: Բանվորների և ծառայողների այն տնտեսությունները, վորոնք պարապում են գյուղատնտեսությամբ տնամերձ հողերի

վրա, աղասովում են գյուղհարկից որևէքի 69-րդ հոդվածի կարգով:

Հրահանգի § 23.— Այն մենատնտես ձկնորսական տնտեսությունները, վորոնք իրենց վորաց հանձնում են կոնտրակտացիայով, յեթե նրանք միայն զբաղվում են ձկնորսական արհեստով, գյուղհարկով չեն հարկվում: Այն մենատնտես տնտեսությունները, վորոնք ձկնորսական զբաղմունքի հետ մեկտեղ զբաղվում են նաև գյուղատնտեսությամբ, իրենց բոլոր յեկամուտների համար հարկվում են գյուղհարկով ընդհանուր հմտունքներով, բացի ձկնորսությունից ստացվող յեկամուտներից, վորոնք հարկվում են միասնական ձկնորսական տուրքով:

Հրահանգի § 24.— Վորոնորդության արդյունաբերական զարգացման շրջանները սահմանում են յերկրային և մարդային դորժակիր կոմիտեները և դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ժողկոմիսորգները:

ՈՐԵՆՔԻ 48-ՐԴ ՀՈԴ.— Դաշնակից և ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները բացի 47-րդ հոդվածի «դ» կետում նշածներից, կարող են գյուղարկով հարկել նաև գյուղատնտեսության մյուս հատուկ հյուպերը:

ՈՐԵՆՔԻ 49-ՐԴ ՀՈԴ.— Յեկամուտների այն աղբյուրները, վորոնք (յեկամուտները) յենքարկվում են գյուղարկի, ուրիշ վոչ մի հարկի յենքակա չեն, բացի:

ա) վերացված ե.

բ) վերացված ե.

շ) ձկնորսությամբ զբաղվելու իրավունքի համար գանձվող տամսային տուրքից:

Այն հողամասերից, վորոնցից ստացված յեկամուտները հարկվում են գյուղատնտեսական հարկով, ինչպես և գյուղատնտեսական ոգտագործման հետ անմիջորեն կազմած կառուցված հողամասերից, եռային ոենուա չի գանձվում:

Գյուղատնտեսական հարկով հարկվող տնտեսությունների կազմի մեջ մտնող շենքներն ազատվում են տեղական շենքների հարկից:

ՈՐԵՆՔԻ 50-ՐԴ ՀՈԴ.— Այն անձինք, վորոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ բաղադային հողամասերում, իրենց յեկամուտներից պետք ե վճարեն կամ գյուղատնտեսական հարկ: Կամ յեկամտահարկ: Հարկման այն կարգը սահմանում:

Են բաղադային խորհուրդները համաձայն դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների և ինքնավար հանրապետությունների, յերկրային և մարզային գործադիր կոմիտեների ցուցումների: Ըստ վերում բաղադային խորհուրդները կարող են սահմանել այն, վոր գյուղատնտեսական հարկով հարկվում են գյուղատնտեսական յեկամուտները և վոշգյուղատնտեսական վաստակները, կամ թե միայն գյուղատնտեսության յեկամուտները: Քաղխորհուրդները գյուղատնտեսական հարկ կարող են սահմանել կամ այն բոլոր անձանց համար, վորոնք գյուղատնտեսությամբ են զբաղվում բաղադային հողերում, կամ թե այդ անձանց առանձին կատեգորիաների համար:

ԽՍՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Բաղադային վայրերում և բաղադային վայրերում այն տնտեսությունները, վորոնք գյուղատնտեսական հարկ են վճարում միայն գյուղատնտեսական յեկամուտների համար, կառուցված հողամասերի համար հողային ունետայից և շենքների տեղական հարկից չեն ազատվում, յերե այդ շենքներն ոգտագործվում են վոշգյուղատնտեսական յեկամուտները սուանալու համար:

ՈՐԵՆՔԻ 51-ՐԴ ՀՈԴ.— Այն անձինք, վորոնք ապրում են բաղադային միևնույն ժամանակ գյուղական տնտեսություններում և միևնույն ժամանակ գյուղական հարկ են վճարում այն յեկամուտների համար, վոր ստացվում են գյուղական վայրերում: Բաղադային ստացվող յեկամուտների համար նրանք հարկվում են յեկամտային և ուրիշ հարկերով ամբողջ բաղադային բնակչության հետ միասին համահավասար հիմունքներով:

## Բ. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎՈՐՈՇԵԼԸ

### ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

ՈՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴ.— Աշխատավոր տնտեսությունների պաշտավարության, մարզագործության, անասնապահության, բանջարաբուծության, բոստանագործության, այգեգործության, խաղողագործության, ծխախոտագործության և մյուս հատուկ հյուպերի յեկամուտը վորոշվում է յեկամտաբերության նորմաներով:

ՈՐԵՆՔԻ 53-ՐԴ ՀՈԴ.— Դաշնակից հաճրապետությունների համար սահմանվում են յեկամտաբերության հետևյալ նորմաները ռուբլիներով:

Անգամ	ԽՍՀ	Ո. կը.	ԲԽ ՍՀ	ԽԲԲԲՀ ԽՍՀ	Վրաց. ԽՍՀ	Հայկ. ԽՍՀ	Թիֆ. Ըքս.	Ուկր. ԽՍՀ	Ճաճ. ԽՍՀ	Ղաղաք. ԽՍՀ	Կիսդ. ԽՍՀ
<b>ՄԵԼ ՀԵԼՏԱՐ ԽՈՂԻ ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ</b>											
Հատիկային և մյուս կուլտուրաների ցանքերի, բացի սառուհիածներից	80	80	83	83	83	83	135	140	115	55	75
Բանջարանոցների և բոստանների	675	590	690	690	690	690	525	525	500	500	550
Կարտոֆիլի ցանքերի և միաժամանակ միաժամանակայի ցանքերի	210	160	235	235	235	235	—	—	—	180	200
Քաղաքացիության այգիների և հաստապատճենների	400	300	—	600	600	600	460	460	460	440	400
Քաղաքացիության այգիների և հաստապատճենների	675	675	675	770	770	770	900	900	900	650	640
Խաղողի այգիների	1100	975	—	880	880	880	1000	1000	900	1000	1050
Խոհարաբների	28	40	30	28	28	28	—	—	—	12	19
Բամբակի ցանքերի վոչ-ջրովի	220	—	—	300	300	300	300	350	250	220	220
Բամբակի ցանքերի վոչ-ջրովի	—	120	—	—	—	—	—	—	—	—	—
Շաքարի ճակնդեղի ցանքերի	100	100	—	—	120	—	—	—	—	100	100
Կանչփի ցանքերի	25	250	250	—	—	—	—	—	—	200	—
Ցերկարամազ կտակատի ցանքերի	200	150	170	—	—	—	—	—	—	—	—
<b>Ա. ՅԱՍՈՒՅԵԼԻ մեկ գլխի յեկամտաբերություն</b>											
Զիոն, ուղարի, ջորու	120	140	130	90	90	90	80	90	80	80	70
Կոլիի	105	105	105	75	75	75	75	80	75	70	70
Յեղան	55	75	65	65	65	65	55	65	55	40	44
Եշի	15	15	—	15	15	15	15	15	15	15	15
Վայրարի և այծի	5	5	5	6	6	6	6	6	5	6	6

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Ուգրեկական ԽՍՀ, Թուրքմենսական ԽՍՀ և Տանիկական ԽՍՀ-ում հատիկային կուլտուրաների յեկամտաբերության նորմաները սահմանված են մի հեկտար ջրովի համար:

Մատնաճշված դաշնակից հաճրապետությունների վոչ ջրովի հողերում հատիկային կուլտուրաների համար, ինչպես և ՌԽՖՍՀ, Ադրբեյջանական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Թուրքմենսական ԽՍՀ, Ուգրեկական ԽՍՀ, Տանիկական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ և Կիր-

գիզական ԽՍՀ վոչ-ջրովի հողերում բամբակից ցանքերի համար յեկամտաբերության նորմաները սահմանված են այդ դաշնակից հաճրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները:

ՈՐԵՆՔԻ 54-ՐԴ ՀՈԴ.— Դաշնակից հաճրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները յեկամտաբերության նորմաները սահմանված են ինքնավար հաճրապետությունների, յերկրների, մարզերի, խույզերի, վորուել նրանք չկան— ըրջանների համար՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները:

Ինքնավար հաճրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները սահմանում են յեկամտաբերության նորմաներ այնպիսի կարող են սահմանել յեկամտաբերության, յերկրի կամ մարզի կազմի մեջ:

Առանձին կուլտուրաների յեկամտաբերության մեջ զգալի տարրերության դեպքում ըրջանի սահմաններում ըրջանային գործադիր կոմիտեները կարող են սահմանել յեկամտաբերության տարրեր նորմաներ առանձին գյուղյորհուրդների և գյուղերի համար:

ՈՐԵՆՔԻ 55-ՐԴ ՀՈԴ.— Դաշնակից և ինքնավար հաճրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները, յելմելով յեկամտաբերության միջին նորմաներից, սահմանում են տարրեր նորմաներ տարրեր տեսակի ցանքերի (ջրովի, վոչ-ջրովի), խոտհարքի (հեղեղվող և ցամաք և այլն), ինչպես և զանազան տեսակի այգիների, բանջարանոցների և բոստանների համար:

Գյուղատնտեսության այլ հատուկ նյուղեր հարկելու գեպ-քում, բացի 47-րդ հոդվածի «դ» կետում թվարկածներից, այդ նյուղերի յեկամտաբերության նորմաները սահմանում են դաշնակից հաճրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործադիր կոմիտեները:

**ԴԱՇԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅԵԿ ԳՅՈՒՂԱ-  
ՏԸՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՃՅՈՒՂԵՐԻ ՅԵԿԱՄՈՒՏԸ  
ՎՈՐՈՇԵԼ**

ՈՐԵՆՔԻ 56-ՐԴ ՀՈԴ.— Մենատնտես տնտեսություններից դաշտավարության, մարգագործության, բանջարաբուծության, բռստանաբուծության, խաղողագործության, այգեգործության և ծխախտագործության հարկվող յեկամուտը վորոշվում է՝

ա) աշնանացանի և գարնանացանի կուլտուրաների ցանքի ամբողջ տարածությունից, բայց վոչ պակաս այն տարածությունից, վորը վորոշված է ցանքի պետական պլանով ընթացիկ տարվա քերքի տակ.

բ) խոտհարքների և բազմամյա տնկարանների (այգիները՝ խաղողի այգիները և այլն) փաստացի տարածությունից:

Հրահանգի § 25.— Այն կուլտուրաներից, վորոնց համար ցանքի պլան չի սահմանված, յեկամուտը վորոշվում է ըստ փաստացի ցանքի: Յեթե ցանքի փաստացի տարածությունը գերազանցում է պլանով սահմանված տարածությունից, այդ դեպքում ընդհանուր պլանից ավելի ցանքած տարածությունը հարկվում է այն կուլտուրաների յեկամուտաբերության նորմաներով, վորոնց նկատմամբ պլանը գերակատարված է:

Հրահանգի § 26.— Այդիների, խալողի արդիների և մյուս բաղմամյա տնկարանների հարկվող յեկամուտը հաշվարկվում է միայն այն տարածություններից, վորոնք զբաղված են պտղաբեր հասակի տուններով:

Հրահանգի § 27.— Հաշվի յեն առնվում տնտեսության մեջ յեղած բոլոր խոտհարքները— վողողվող, վոչ-վողողվող, ան-ջրողի և անտառային:

Մարդագործության յեկամուտը վորոշելիս, այն վայրերում, վորտեղ կա դաշտավարության հողը հանդիսաւ թողնելու սիստեմ, հաշվառման յենթակա յեն միայն այն խոտհարքները, վորոնք մշտակես ողտադործվում են տնտեսության կողմից:

Այն հողամասերը, վորոնք ծածկված են թփերով կամ անսուսով, հարկվում են վորաբես խոտհարք միայն այն մասով, վորը փաստորեն հնձվում է: Զեն հարկվում այն ճահճային խոտհարքները, վորոնց խոտը պիտանի չե անասունի կերի համար:

**ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՎՈՐՈՇԵԼ**

ՈՐԵՆՔԻ 57-ՐԴ ՀՈԴ.— Անասունների յեկամուտը վորոշելիս հաշվի յեն առնվում:

ա) ձիերը, յեզները, գումշները, եշերը, զորիները 3 տարեկան հասակից և ուղտերը 4 տարեկան հասակից.

բ) կովերի առաջին ծնից հետո և յերինջները յերեք տարեկանից բարձր.

շ) յեզները յերեք տարեկանից բարձր.

դ) ձմեռն անցկացրած վոչխարմները և այծերը:

Անասունների հասակը վորոշվում է առ 1 մայիսի ընթացիկ տարվա:

**ՎՈՉ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՆԵՐԻ ՅԵԿԱՄՈՒՏԸ  
ՎՈՐՈՇԵԼ**

ՈՐԵՆՔԻ 58-ՐԴ ՀՈԴ.— Վոչ-գյուղատնտեսական վաստակները հաշվի յեն առնվում նախորդ տարվա հունիսի 1-ից մինչև ընթացիկ տարվա մայիսի 31-ը ժամանակի համար:

ՈՐԵՆՔԻ 59-ՐԴ ՀՈԴ.— Վոչ-գյուղատնտեսական վաստակների յեկամտի չափը վորոշվում է այդ վաստակներն ունեցող յուրաքանչյուր մենատնտես տնտեսության համար, հարկային տեսչի կողմից փաստագրական տվյալների, հարկատվի ցուցմունիքների, հարկային տեսչի կողմից հավաքվող ուրիշ նյուրերի հիման վրա և հաստատվում է շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից:

Ըստ վորում ընդհանուր յեկամտից հանվում են արհեստի եխմնական արտադրական ծախքները՝ հումույթի, կիսաֆարբիկատի, վառելիքի և այլն: Այս ձևով վորոշված յեկամուտը մտցվում է տնտեսության հարկվող յեկամտի կազմի մեջ 50-ից մինչև 100 տոկոսի չափով: Առանձին արհեստների և վաստակների տեսակների տոկոսների չափերն ըստ շրջանների սահմանում են դաշնակից և ինքնակար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յերկրային և մարզային գործկոմները:

Անտառամշակման (փայտամշակում, փայտի դուրս տանելը, փայտը գետով փախաղելը և այլն) և տորֆամշակման աշ-

խատանքից ստացվող յեկամուտմերը մտցվում են տնտեսության հարկվող յեկամուի մեջ ամենուրեք 20 տոկոսի չափով:

Կոռպերացված տնայնագործների և արիեստավորների կողմից իրենց արտադրանքն արտելին համանելու դիմաց ստացված յեկամուտները զյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում, այլ յենթարկվում են յեկամուային հարկի, աշխատավարձի համար սահմանված կարգով, իսկ կոռպերացված տնայնագործների և արիեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են արտադրանքն իրենց արտելից դուրս վաճառելուց, մտցվում են տնտեսության զյուղատնտեսական հարկի հարկվող յեկամուի մեջ չկոռպերացված տնայնագործների հետ հավասար հիմունքներով:

Հրահանգի § 28.— Վոչ-զյուղատնտեսական վաստակների ընդհանուր յեկամուի մեջ մտցվում են սեփական արտադրության առարկաների և ապրանքների վաճառքի արժեքը իրաստացի զներով, ուրիշի մթերքները կամ նյութերը վերամշակելու համար ստացված վճարը, փոխադրությունից ստացված ամբողջ վարձարությունը, չենքերը վարձով տալուց ստացված յեկամուտները: Բնամթերային վճարման ձեռով ստացված վոչ-զյուղատընտեսական յեկամուտների (հացահատիկով, կարտոֆիլով, ֆուրաժով, մանութակուրայով և այլն) դնահատումը կատարվում է չուկայական զներով:

Հրահանգի § 29.— Վոչ-զյուղատնտեսական վաստակներից ստացված յեկամուտը վորոշելիս, յենթակա յեն հանման հետեւյալ արտադրական ծախքերը՝ հումքի և գնված վառելիքի արժեքը, հատուկ չենքի վարձը, արտադրական կահավորումը, ինչպես և արհեստի մեջ զբաղեցրած ձիու համար զնված կերի արժեքը:

Հրահանգի § 30.— Յենթաշրջանային հարկային տեսուչները պարտավոր են պետական և կոռպերատիվ կազմակերպություններում և հիմնարկություններում տեղեկություններ հավաքել այն դումարների մասին (ինչպես դրամով, նույնպես և բնամթերքով) կատարված աշխատանքի համար:

Հրահանգի § 31.— Վոչ-զյուղատնտեսական յեկամուտների չափերը վորոշում են հարկային տեսուչը հետեւյալի հիման վրա՝ ա) հիմնարկների, կազմակերպությունների և անհատ քաղաքացիների տեղեկանքներով կատարված աշխատանքների համար վճարված դումարների մասին. բ) առանձին քաղաքացիներին

հարցաքններու միջոցով և գ) իրենց՝ հարկատուների տված ցուցմունքներով:

Մենատնտես տնտեսությունների վոչ-զյուղատնտեսական յեկամուտները սահմանելիս հարկային տեսուչներին կատեգորիկ կերպով արգելվում են պահանջել զյուղիսորհուրդների, կոլտնտեսությունների վարչությունների և ակտիվի խորհրդակցությունների արձանագրությունները, վորպեսդի այդ փաստաթղթերով հիմնավորեն այդ յեկամուտների չափերը:

